


ՄՏՈՐԵՐԿՐՅԱ ՔԱՂՅՐԱՀԱՄ ՋՐԵՐ

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի մոնիթորինգն իրականացվել է ազգային ցանցում ընդգրկված 119 դիտակետում, այդ թվում՝ 25 շատրվանող հորատանցք, 35 չշատրվանող հորատանցք, 12 գրունտային ջրհոր և 47 բնաղբյուր: Դիտակետերում կատարվել են ջրի ծախսի, մակարդակի և ջերմաստիճանի չափումներ ամսական 6 անգամ հաճախականությամբ:

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Հյուսիսային ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 2 բնաղբյուրում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի և ծախսի չափումներ: Դիտակետերը գտնվում են Դիլիջան համայնքի Հաղարծին գյուղում:

Եռամսյակի ընթացքում N2058 դիտակետում նկատվում է ծախսի կայունացում 0.7 լ/վ սահմաններում: N2059 դիտակետում ջրի ծախսը նվազել է՝ 0.23լ/վ-ից հասնելով 0.18 լ/վ:



Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք

Ախուրյանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 40 դիտակետում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի, ծախսի և մակարդակի չափումներ:



Ախուրյանի ՋԿՏ-ի Արարատյան արտեզյան ավազանի հատվածում՝ Ակնաշենի N108, N198, Վարդանաշենի N1533, Արագափի N1537, Տարոնիկի N2018, Բամբակաշատի N2024 և Հայկավանի N2025 դիտակետերի հորատանցքերում հուլիս օգոստոս ամիսներին նկատվում է մակարդակների իջեցում, իսկ սեպտեմբերին՝ բարձրացում:




Գայի N1521, Ջրառատի N2021 և Ակնաշենի N2001 դիտակետերի շատրվանոց հորատանցքերում հուլիս օգոստոս ամիսներին նկատվում է ծախսերի նվազում, սեպտեմբերին՝ ավելացում: Ակնաշենի N2001 դիտակետը 2023 թվականի 2-րդ եռամսյակում ցամաք էր, իսկ այս տարի շատրվանել է:

Ստորերկրյա ջրերի մակարդակների տատանումներ չեն նկատվել Արագածավանի N2080, Մյասնիկյանի N2082 դիտակետերում իսկ Արտամետի N2083 և Արտենիի N2081 դիտակետերում նկատվել է մակարդակի տատանումներ հուլիս օգոստոսին իջեցումներ, այնուհետև սեպտեմբերին՝ բարձրացում:

Գյումրիի N2030, N2037, Մարմաշենի N2032, N2035, Աշոցքի N2039, N2040, N2041, Ցողամարգի N2077 դիտակետերի աղբյուրներում նկատվել է ջրի ծախսի կայուն վիճակ, աննշան տատանումներով:

Առափիի N2042 դիտակետի ջրհորի ջրի մակարդակը իջել է շուրջ 10 սմ-ով, իսկ Ախուրյանի N2043 դիտակետի ջրհորի մակարդակը բարձրացել՝ 80 սմ-ով:





Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Հրազդանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական հատկանիշների մոնիթորինգն իրականացվել է 32 դիտակետում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի, ծախսի և մակարդակի չափումներ:

Հրազդանի ՋԿՏ-ի Արարատյան արտեզյան ավազանի հատվածի Մասիսի N1519, Դաշտավանի N1526, Սիսի N1535, N1536 և Ջրահովիտի N2007 դիտակետերի շատրվանող հորատանցքերում ջրի ծախսերը և մակարդակները, աննշան տատանումներով, կայուն են:


Ծախսի և մակարդակի ավելացումներ են նկատվել Հովտաշենի N2008 և N2053 դիտակետերի շատրվանող հորատանցքերում: 9-10ամ-ով մակարդակների բարձրացումներ են առկա նաև Սիսի N78 և Հայանիստի N2005 դիտակետերում: Հովտաշատի N1523, Սիսի 2003 և Ջրահովիտի N2004 դիտակետերի հորատանցքերում նկատվել են ծախսի և մակարդակի բարձրացումներ:

Արարատյան դաշտի նախալեռնային գոտու՝ Արագածի N2085, Լեռնամերձի N2088, Աղավնատան N2087, Դոդսի N2086, Կարբիի N2089 և Փարպի N2119 դիտակետերում դիտվել է ստորերկրյա ջրերի մակարդակի կայուն վիճակ, աննշան տատանումներով:

Նիգավանի N2010 և N2011 դիտակետերի ջրհորերում նկատվել է իջեցումներ մինչև 1-ից 3 մետրի սահմաններում, իսկ Խորոնքի N2023 դիտակետի ջրհորում՝ կայուն վիճակ է:


Շուրջ 2 անգամ նվազել է Բջնիի N246 դիտակետի աղբյուրի ծախսը, Սուլակ գյուղի N1297 դիտակետի ծախսը ևս նվազել է՝ 0.35-ից հասնելով 0.09 լ/վ-ի: Կայուն աճ է գրանցվել Ապարանի N2107 դիտակետի աղբյուրում՝ 4.4 լ/վ: Նույն պատկերն է նաև Ապարանի N2051 դիտակետի աղբյուրում, որտեղ ջրի ծախսը 4.7-4.8 լ/վ սահմաններում է: Բուժական գյուղի N2105 աղբյուրում դիտվել է ծախսի նվազում, Ավելացել է Բյուրականի N2108 դիտակետում՝ ավելցում:

Կայուն ծախս է դիտվել Երևանի N970, Ղազարավանի N755 և Կարբիի N1636 դիտակետերի աղբյուրներում:




Շատրվանոց հորատանցքեր
Ծախս, լ/վ

Հրազդանի ՋԿՏ




Շատրվանոց հորատանցքեր
Մակարդակ, մ

Հրազդանի ՋԿՏ




Չշատրվանոց հորատանցքեր
Մակարդակ, մ


Հրազդանի ՋԿՏ



Չշատրվանոց հորատանցքեր
Մակարդակ, մ

Հրազդանի ՋԿՏ







Սևանի ջրավազանային կառավարման տարածք




Սևանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 15 դիտակետում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի, ծախսի և մակարդակի չափումներ:

Վարդենիս գյուղի N1809 և N1810 դիտակետերի շատրվանող հորատանցքերի ծախսերը աճել են, N1811 և N1812 դիտակետերի ծախսերը՝ նվազել:

Ջրի ծախսի նվազում է դիտվել Գանձակ գյուղի N2013 և Վաղաշեն գյուղի N2090 շատրվանող հորատանցքերի դիտակետերում, իսկ Դարանակի N2095 դիտակետի շատրվանող հորատանցքի ծախսը կայուն է և կազմում է 2.43 լ/վ:

Նվազել է Ակունքգյուղի աղբյուրների N31, N902 դիտակետերի ծախսը, իսկ N1053 դիտակետի աղբյուրում դիտվել է կայուն ծախս: Ծախսի աճ է գրանցվել Խաչաղբյուր գյուղի N2093 դիտակետում, իսկ Գավառ քաղաքի N2014, Աղբերք գյուղի N2091 և Լիճք գյուղի N2100 դիտակետերի աղբյուրներում դիտվել է ծախսի նվազում:





Արարատյան ջրավազանային կառավարման տարածք



Արարատյան ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 23 դիտակետում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի, ծախսի և մակարդակի չափումներ:





Մրգավետ գյուղի N2052, Արտաշատ քաղաքի N2062, N2064, N2069 և Դալար գյուղի N2063 դիտակետերի հորատանցքերում դիտվել է ջրի մակարդակի իջեցումներ՝ մինչև 2մ սահմաններում: Արտաշատ քաղաքի N2073 դիտակետի ջրհորում դիտվել է մակարդակի բարձրացում մինչև -1.72մ, Արմաշ գյուղի N2074 դիտակետի ջրհորում՝ մինչև -6.44մ: Կայուն վիճակ է դիտվել Արարատ քաղաքի N2076 դիտակետերի հորատանցքում: Լուսառատ գյուղի N2074 և Եղեգնավան գյուղի N2065 դիտակետերում դիտվել են ջրի մակարդակի բարձրացումներ:

Վեդի քաղաքի N2006 դիտակետի ջրհորում հուլիս-սեպտեմբեր ժամանակահատվածում մակարդակը իջել է 1.6մ:

Մալիշկայի N502, Ագարակաձորի N785, Գառնիի N2045, N2046 աղբյուրների դիտակետերում դիտվել են ջրի ծախսի ավելացումներ: Եղեգնաձոր քաղաքի N787, Ջերմուկ քաղաքի N2048 և Կեչուտ գյուղի N2060 դիտակետերի աղբյուրներում դիտվել է ծախսի նվազում:

Ջեղեայի N2050 դիտակետի աղբյուրի ծախսը ավելացել է 0.13 լ/վ չափով: Գառնի քաղաքի N845 և N2047 դիտակետերի աղբյուրների ջրերի ծախսերը նվազման միտումներ ունեն:





Հարավային ջրավազանային կառավարման տարածք

Հարավային ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 7 դիտակետում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի և ծախսի չափումներ:

Շաքի գյուղի N532, Գորիս քաղաքի N899 և N1399 դիտակետի աղբյուրների ծախսը նվազել է:

Գորայք գյուղի N529, Անգեղակոթ գյուղի N1323 և N 1323 դիտակետերում նկատվում է աղբյուրների ջրերի ծախսի աճման միտում: Համեմատաբար կայուն է Սպանդարյանի N537 դիտակետի ծախսը:

